Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 34

ՔՍԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՋ

ՇԱԲԱԹ 13/25 ՆՈՅԵՄԲԵՐ 1899

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
Ե. ՊՈՐՈՍԵԱՆ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ
Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ լրագրի
ԳԱՇԻՐԷ (Հոպպանիէ)

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
HABBANIEH LE CAIRE (ÉGYPTE)

ԱՐՇԱԼՈՅՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ամբողջ տարի
Հեղ. 60
ԵԳԻՊՏՈՍ.
Տարեկան, ողջ դաշ.
Վեցամսեայ » 30
ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐ
Տարեկան Ֆրանք 20
Վեցամսեայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԽԿ Է ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ խմբագրութեանս վրայ։

Խմբագրութեանս ուղղուած գրութիւնք եւ չ'են տրուիր։

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՐՀԷՆ

ԿՆՈՋ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Կինը իբր գրագէտ եւ հրապարակագիր

Տուն և ընտանիք հաստատուած են կնոջ գործունէութեան իբր բնական սահման. բայց ժամանակի ընթացքին և հոլովման հետ, ընկերային պայմանք և անոր կարգուսարքը մեծակա փոփոխութիւն մը կրած են և ատոր հակազդեցութենէն կինը չէր կրնար ազատ մնալ. մէկ կողմանէ կենաց պայքարը, պայքար մը՝ որոյ մէջ սեռը լինի զօրաւոր թէ տկար պարտաւոր է հաւասարապէս մղել. և միւս կողմանէ կանանց մտքի մակարդակին բարձրացումը ուսմամբ, որ նորանոր հորիզոններ կը բանայ անոր գործունէութեան առաջ. այսպէս թէ այնպէս՝ զարգիս գեղեցիկ սեռը իւր ներկայացուցիչը ունի մէկէ աւելի ասպարէզներու մէջ. կին հեղինակ, կին հրապարակագիր, կին բժիշկ, կին փաստաբան և այլն այսօր սովորական բաներ կ'երեւին. թէպէտ տակաւին Դաղղիոյ մէջ արտօնութիւն տրուած չէ կին փաստաբանաց դատավարութեանը, բայց այդ խոչնդոտի բարձումը լոկ ժամանակի խնդիր մ'է, և ինչպէս Ամերիկայի մէջ, նոյնպէս Ֆրանսայի մէջ ալ պիտի յաջողին վերջապէս ձեռք բերել արտօնութիւնը։

Կանայք փորձով ցոյց տուած են թէ կարող են լաւ դիրք մը գրաւել մէկէ աւելի ասպարէզներու մէջ. աւելորդ է ըսել թէ գործին ընտրութիւնը խնամով լինելու է. ընտրութեան ժամանակ միշտ պէտք է աչաց առաջ ունենալ կնոջ յատուկ բնական ձիրքերը, որոցմով օժտուած է բնութենէն. յաջող արդիւնք մը յաջող ընտրութենէ մը կախում կրնայ ունենալ. զոր օրինակ, կին մը կրնայ շատ լաւ հիւանդապահ լինիլ, բայց չեմ կարծեր թէ վստահութիւն ներշնչէր եթէ երեւէր պատերազմի դաշտին վրայ։ Ժանտարմներ բացառութեանց կարգէն են։

* * *

Կնոջ ազատագրութեան հարցը — որ սերտ առնչութիւն ունի իւր ասպարէզին ընտրութեանը հետ — մին է ա՛յն հարցերէն՝ որք չեն կորսնցներ բնաւ իրենց այժմէութիւնը. ծեծուած է այս խնդիր անցեալին մէջ, ներկայ սերունդն ալ կ'զբաղի ատով. այս չի նշանակեր սակայն թէ կնոջ այժմու ընտանեկան և ընկերային դիրքը նոյն է ինչ որ էր, օրինակի աղագաւ, դար մը առաջ. բնաւ երբէ՛ք, որովհետև երէկ կնոջ համար բաւական համարուած անկախութիւն մը՝ այսօր անբաւական կը նկատուի, որով խնդիրը միշտ կը մնայ խնդիր, թէպէտ կնոջ դիրքը նոյն միջոցին զգալի փոփոխութիւն կրած լինի։

Կարեւոր է սա կէտը թէ՝ կնոջ վայելած ազատութիւնը պէտք է համապատասխանէ իւր ստացած զարգացմանը աստիճանին. ամէն իրաւունք պարտականութիւն մը կ'ենթադրէ, և կինը նորանոր իրաւանց տիրանալով, անոնցմէ առաջ գալիք պարտականութեանցը գիտակցութիւնը ունենալու է։

Եթէ այժմու Ամերիկացի կնոջ վայելած ազատութիւնը տրուի գաւառացի հայ կնոջ, այդքան ազատութիւն ո՛չ միայն ո՛եէ չօշափելի օգուտ չի պիտի ունենայ իրեն համար, այլ նոյն իսկ մէկէ աւելի վնասները կրնայ ունենալ. պատճառը պարզ է։ Գաւառացի հայ կինը — մեր կամքէն բոլորովին անկախ պատճառներով — պատրաստուած չէ ամերիկեան կեանքին և դեռ շա՞տ հեռի է ամերիկայի կնոջ անձնավստահ նկարագրէն. փութամ սակայն աւելցնելու թէ՝ ասով ըսել չեմ ուզեր որ հայ կինը պէտք է ստրուկ մը լինի. քա՞ւ լիցի, միայն իւր վայելած և վայելելիք ազատութիւնը պէտք է ուղիղ համեմատի թէ՛ գտնուած միջավայրին պահանջմանը և թէ՛ ստացած դաստիարակութեանը։ Ազատութիւնը զէնք մ'է, պէտք է գիտնալ զայն գործածելը. անվարժ ձեռաց մէջ այդ տեսակ զէնք մը կրնայ մեծապէս վնասակար լինիլ։

* * *

Թէ կին մը պէ՞տք է որ ընտանեկան շրջանակէն դուրս ուրիշ գործերով ալ զբաղի, առ այդ ի՞նչ անպատեհութիւններ կան. կամ թէ՝ եթէ պէտքը զգալի է, ի՞նչ պայմանաց տակ պէտք է գործէ. խնդիրը այս տեսակէտով քննելը մեր այս աւուր յօդուածին գծած սահմանէն դուրս է, որով զանց կ'ընենք զայն. այժմ տեսնենք թէ՝ ի՞նչ դեր ունեցած է կինը գրականութեան մէջ։

(Շարունակելի) ՅԱՐ. Լ. Ս. ՇԱՄԼԸԵԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՆԱՄԱԿԱՆԻ

Բ.

ՆԱՄԱԿ ԱՌ Պ . . . ։

յ'Աղէքսանդրիա.

Բարեկա՛մ. — Կը յիշէ՞ք թէ առաջին նամակս ո՛ւր աւարտած էի. բացէ՛ք զայն, եթէ կը հաճիք ու կարդացէ՛ք եւ պիտի տեսնէք որ Խորէնեան կամ Գալստեան վարժարանի դռնէն ներս մտայ։

Շատ բնական է որ չէ՛ք հետաքրքրուեր թէ ց'այսօր այնտեղ սպասած եմ երկրորդ նամակս պատրաստելու համար։ Թէեւ դուք անիրաւօրէն իմ բաւական երկար լռութեանս պահուն, քսանէ աւելի նորանոր հարցերու շարք մը աւելցուցիք, Ձեր անվերջանալի եւ տաղակալի մանրամասնութիւնն . . . բառերովը դատնացուցած . . . ։

Ինչ որ է, բուն նիւթէն չ'շեղիմ. — Վարժարանէն ներս մտնողին ակնարկը, ի մէջ այլոց, ամենէն առաջ կը հանդիպի ծերունիի մը, որ վարժարանին եկող գացող բոլոր պաշտօնեաներու վերաբերեալ պատմական անցեալներուն կենդանի վկան է եւ կամ աւելի պատշաճ է ըսել, վարժարանին քսանէ աւելի տարիներու պատմութիւնն է։

Նախորդ նամակաս նկարագրած վտանգալից ճամբորդութիւնս կատարելէ վերջ, չէ՛ք կասկածիր թէ փոչոտած եւ յոգնած պէտք է ըլլամ, ուստի ստիպուած եմ քիչ մը հանգչելու բարի ծերունիին քով, մանաւանդ շատ հաճելի էր ինձ քանի մը խօսք փոխանակել անոր հետ։ Ուրիշ առթիւ պիտի գրեմ հնօրեայ պաշտօնէին եւ իմ մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը . . . որ շատ հետաքրքրաշարժ է թէեւ, բայց այս մասին անհամբեր ըլլալնիդ, այժմէն ըսեմ որ աւելորդ պիտի ըլլայ։

Դասերու ժամերուն աւարտման եւ 5—10 վայրկենի դադարը ծանուցանող զանգակի մը սուր ճիչերը ընդհատեցին մեր խօսակցութեան թելը։ Ոտքի ելայ Տնօրէնը տեսնելու համար. որպէս զի միասին շրջինք դասարաններն, որոնք բոլորովին անյարմար եւ դասարան կոչուելու անարժան եղած ըլլալնին գուշակելու համար, կանխիկ ըսեմ թէ, Ցովնան մարգարէին չափ խելք ունենալն անգամ բաւական էր։

Բայց ի՞նչ կ'ըսէք, բարեկա՛մ, անկարելի եղաւ գտնել Տնօրէնը. որովհետեւ Խորէնեան կամ Գալստեան վարժարանը պէտք է գիտնալ որ բաւական թուով դասարաններ չունենալով հանդերձ, կիսա-դասարանական կամ կիսա-սրահական եւ կամ պատշաճ բառը գործածելու համար անանուն դրութեան մը վերածուած ըլլալով՝ Տնօրէնը ատոնց եւ ոչ մէկուն մէջ էր։

Եթէ ենթադրութիւնները ո՛ եւ է արժէք պիտի ունենան հոս, առանց վարանելու կրնամ ըսել թէ Հոգաբարձուին կլկլակը (նարկիլէ) նորոգելու համար, անոր տունը գացած ըլլալը հաւանական կը թուէր։ Ի՞նչ տարօրինակ բան . . . կարծողներ ալ կային թէ Ենովք ու Եղիա մինակութենէ ձանձրացած եւ նոյն իսկ 19րդ դարուն մէջ յառաջդիմութեան նոր ապացոյց մը ի հանդէս բերելու միտումով, երրորդութիւն մը կազմել ուզած են եւ իրենց այդ նպատակին գործակից ընտրած են մեր Տնօրէնը ու վե՛ր . . . փոխադրած։

Նախանձելի չէ՞ք գտներ չպուխի կրակ տալէ յոգնած ողորմելի վարժարաններուն այսպէս մէկէն ի մէկ անմահութեան գիրկը փոխադրուիլը։ Հիմակ ո՞վ գիտէ. քանիներո՞ւ բերնին ջուրերը պիտի վազէ այս երիցս երանելի լուրերուն ծանօթանալով։

Տնօրէնին անգոյութենէն սաստիկ բարկացած, (ինքնիրենս ամմա) վրէժս լուծելու համար դրսի դրան դէմի սենեակը մտայ, որուն վրայ Տնօրէնի Սենեակ գրուած էր. լաւ ըսի, արդէն ինձ համար սենեկին մէջ գտնուած առարկաներն իսկ պէտք եղած բացատրութիւնը կրնան տալ. ուստի ինչ որ տեսայ ահաւասիկ։ Աղտոտ ու տաշուած խարխուլ գրասեղաններ, որոնք ճաշակ կը բուրին. . . ։ Քայքայուած պատերու վերսմանչելի եւ գեղեցիկ . . . տեսարաններ. չէ՛, չէ՛, ներեցէ՛ք, կարծեցի թէ գարնան առաջին ամիսները, մայիսի մէկը, դաշտային հրաշալի գեղեցկութիւններ պիտի նկարագրեմ, հին բանաստեղծիկներու ա՛յներովը, ո՛հներովը ու չատ մ՚ալ աւա՛ղներովը սկսուած ու վերջացած. անոր համար այդ երկու խոշոր բառերը գործածեցի. բի՛ւր ներում։

Պատերը ըսի, այո՛, պատերը, յանցանքի համար ոտքի վրայ հանուած աշակերտներուն կրծած ու չէնքէ չնորքէ մերկացուցած կիսա թղթազարդ պատերը. ադամային մերկութեամբ նայողին աչքին կը հանդիպին։ Ապակիներէ մնծաւ մասամբ զուրկ երկու պատուհաններ, որոց միոյն մէջ ծաղկի թաղարներու տեղ, ջրի դատարկ սափորները դրուած էին, Եգիպտական հնութեանց թանգարանէն օրինակուած զինկ—ապատ տձեւ ամանի մը մէջ. միւս պատուհանը քանի մը կաւիճի մանրուքներ, գրատախտակի սրբիչ մը եւ մանր մունր տախտակի կտորներ. ատոնց վարագոյրներու մասին զատ գլուխ մը բանալ կարժէ . . . ։ Գրադարան մը 1860ին Երուսաղէմ տպուած Սաղմոսներով, Գործոցներով լեփ լեցուն։

Վարժարանին տարեկից անշուք սեղան մը, որուն վրայ կ՚երեւէր հին տետրակներ, որոնք բոլորովին ուշադրութիւնս գրաւեցին. վարժարանի ներքին կեանքին վրայ առատ տեղեկութիւններու պաշար մը կ՚երեւէր հոն. ատոնք միայն կրնային Ձեր ուղած մանրամասնութեանց գոհացումը տալ . . . ։

Երկրորդ զանգակ մը աւելի սուր գանգիւնով, հանգստի վայրկեաններուն աւարտած ըլլալը կը ծանուցանէր. ժամացոյցս բայի զանգակահարին ճշդապահութեան վրայ ալ գաղափար մը կազմելու համար. ինչով զբաղած ըլլալը չեմ գիտեր չիտակը, բայց 10 վայրկեանը 35 վայրկեան տեւած էր . . . ։ Ա՚լ դասարաններն եւ վարժարանի ուրիշ մասերն այցելելու պէտքը չէ՛ք տեսներ, ինչպէս կը հաւատամ. հիմակ յստակ կերպով հասկցաք թէ վարժարանը՝ գերեզմանէն խոյս տուող գանկին նման, գլուխը առած ո՛ւր կերթայ . . . ։

Սա հին տետրակնե՛րը, Աբրա Ֆարիայի գանձե՛րը, ինծի պէտք եղածներն անոնք են, ուստի մէկ երկուքին հետ վերադարձնելու պայմանը կնքելով, թեւիս տակ սեղմած կը մեկնիմ . . . ։

Դուրս եկած սենեկիս «մնաք բարով» ըսելու առթիւ, դրան վերի կողմը մարմարիոնի վրայ գրուած հետեւեալ արձանագրութիւնը կարդացի.

« Շնորհիւն Աստուծոյ ի հիմանց կառուցաւ վարժարանս յանուն քերթողահօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ, արդեամբք եւ ծախիւք վանեցի Ազգասէր Կարապետ աղայի Տէր Գալստեան, ի յաւերժական յիշատակ լուսահոգի հօրն Տէր Գալուստին եւ մօրն Մարիամայ եւ եղբօրն Խաչատրոյ եւ համօրէն ննջելոց իւրոց եւ կենդանեաց, ի վայելումն եւ ի բարեկրթութիւն մանկանց Արամեան տոհմիս որ յԵգիպտոս, ի բարոյական եւ յուսումնական վարժս զիտութեան.

Ցամի Տեառն 1854 Սեպտ. 25 Դահիրէ

ԿԱՑԾԱԿ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

Փարիզ 10 Նոյեմ. 99

Անգղիական նոր փորձը ծայրագոյն Արեւելքի մէջ. — Ճաքոնը մեծ պետութեանց կարգն անցնելով, բնականաբար իր դրութեան անպատեհութիւններն տանելու ըստիպուած է. ուստի և պարտաւոր է հեռատեսել բոլոր այն խաղերն, զորս իրեն դէմ կը պատրաստեն, զինքն զանազան քաղաքական հակացողութեան մէջ մոցնելու։

Անգղիացիք անուանի են այս տեսակ խաղերու մէջ. և այս վայրկենիս կ՚ուզեն որ Ճաքոնցիք Ծայրագոյն Արևելքի մէջ գործել սկսին։

Ցիրուի այս օրերս Լոնտրայի փողոցներուն մէջ շրջուն յայտարարութիւններ կը պատէին Ռուսիոյ և Ճաքոնի պատերազմն ծանուցանելով. մէն մի մարտիկ ազգի զինուորական զօրութիւնը թուելով, Ճաքոնցիներն Ռուսիոյ դէմ գրգռելով։ Այն Ռուսներն, որք կրնան ա՞յնչափ ցաւ պատճառել Անգղիոյ, Պարսկաստանի, Հնդկաստանի և ուրիշ տեղերու մէջ։

Ճաքոնաց տրուած առաւելութիւններն մասնաւոր բնութիւն մը ունին. անոնք պիտի կարենան Չինաստանի հողէն ուզածնուն չափ գրաւել և կաղմակերպել Չինական բանակն. իսկ Անգղիա պիտի տիրէ միայն նաւահանգիստներուն։

Բոլոր այս ծրագրին մէջ յաջողելու համար միակ խոչնդոտն է Ռուսիա, իսկ Ճաքոն ինքն առանձին կրնայ Ռուսաստանի նաւատորմիղն անգործութեան մատնել, առանց Անգլիոյ օգնութեան։

Երբ խնդիրը վերջանայ, Անգղիան պիտի վայելէ պտուղը, իսկ նորածագ Արևի կայսրութիւնը միայն կեղևը պիտի ունենայ։ Ասկէ աւելի արդար ի՞նչ կայ։

Ճաքոնի առած դասերը իրեն փորձառութիւն տուած լինելու են, վերոյիշեալ գեղեցիկ դատողութիւններէն չ՚խաբուելու համար։ Սակայն Անգղիական մամուլին մղած պայքարն բոլորովին կարևոր է քաղաքական տեսակէտով։

— Անգլո Գերմանական դաշինք մը.— Այն օրն որ Նիքոլա Բ. Կայսրը Փոցտամ կը հասնէր, կը հրատարակէին Անգլո-Գերմանական դաշինքի մը բնագիրն, որ Թոկիոյ և Սամօայի խնդիրներն կը կարգադրէր։

Թոկիոյ խնդիրն չատ ծանր չէր, հարկաւոր էր մրայն անբաժան և չէզոք երկիր մը, որ Գերմանական և Անգղիական գաղթականութեանց կը դպչէր։

Սամօայի խնդիրն աւելի դժուար էր լուծելն։ Երեք պետութիւններ այնտեղ շահ ունէին, Գերմանիա, Անգղիա և Միացեալ Նահանգներն։ Թէպէտ այդ երկիրն չատ արդիւնաբեր էր, սակայն իր տարածութիւնը և բնակչաց թիւն չատ մեծ չէր այնքան վիճաբանութեանց տեղի տալու համար։ Սակայն իր դիրքը Խաղաղական ովկիանոսին մէջտեղն, բոլորովին սքանչելի է և Ովկիանեան վաճառականութեան կեդրոն մ՚է Ամերիկայի և Աւստրալիոյ մէջտեղն գտնուելով։

Ասոր համար Աւստրիացիք կը փափաքէին որ Սամօայներ Անգղիոյ հպատակութեան մէջ մնան, թէպէտ գերմանական վաճառականութիւնը հոն մեծ տեղ կը գրաւէ։

Ամերիկացիք ալ իրենց կողմէն կ՚ուզէին տիրանալ, Խաղաղականին տէր դառնալու համար։

Վերջապէս գերմանացիք Սամօայներուն կապուած են ո՛չ միայն իրենց շահերուն համար, այլ մարդկային զգացումով մը, վասնզի այդ կղզիին իրենց կայսրութեան կազմակերպութենեն անմիջապէս յետոյ իրենց առաջին գաղթականութիւնն եղած է։

Կերևայ թէ խնդիրը լուծուած է ինքպաստ գերմանացւոց, մանաւանդ որ Անգղիա պէտք ունի այժմ գերմանացւոց ո՛չ թէ բարեկամութեան, գոնէ ձեռնպահութեան, իսկ ամերիկացիք արդէն չատ զբաղած են Փուպայի և Փիլիպեանց խնդիրներով։

A. S. ԵՒ Մ. Ս. ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՀԵՌԱԳԻՐ

Պօլսոյ առողջապահական վարչութեան կողմէ հետեւեալ հեռագիրը կուղղուի Եգիպտական կառավարութեան.

ԲԵՐԱ, 21 Նոյ. — Եգիպտոսի դէմ դրրուած քարանթինան հինգ օրուան իջեցուցուած է այս օրուընէ սկսեալ։

ՌԻԻԹԷՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ԼՈՆՏՈՆ, 23 Նոյ. — Զօրավար Պարթօնը 2000 մարդերով ու քանի մը թնթանօթներով Մուի գետին տիրոյ դիրք մը գրաւած է։

—Երէկուան կռիւը ցուցուցթէ պօէրներուն ռմբարձակ մարտկոցը աւելի զօրաւոր է քան մեր հրետանին։

—Զօրավար Հիլտեարաը 2000 մարդերով Իսթքօրթի հրամանատարութիւնը առած է։

Երկու զօրաբանակներ այսպէս մեկուսացեալ են գործողութեանց կեդրոնէն, ուր զօրավար Ռլէրին իւր ուժերը կը ժողվէ և հրետանիին ձիերը հանգչեցնել կուտայ։

—«Բէլ-Մէլ» կաղէթը կ՚ըսէ թէ Մաֆքինկի մէջ ջերմը կը տարածուի ջուրի գէշ տեսակին հետեւանօք։

ՕՐԱՆԺ ՌԻՎԷՐ, 23 Նոյ. — Լորտ Մէթիւն կը հեռագրէ թէ՝ Պէլմնի մէջ 23 ի առաւօտուն թշնամւոյն վրայ յարձակած է։ Զինուորները յաջորդաբար երեք բլուրներու գագաթները գրաւած են. յաղթութիւնը կատարեալ եղած է։ Անգղիական կորուստը 58 մեռեալ, 145 վիրաւորեալ, 21 անհետացած։ Զօրավար Ֆատհըրսթօնհօ ծանրապէս վիրաւորուած է։

ԼՈՆՏՈՆ, 24 Նոյ. — Զօրավար Մէթհիւն կը հեռագրէ թէ՝ հետեւակ գունդը միանալով ծովային հրետանիին հետ փայլուն կերպով պատերազմեցաւ. թշնամին քաջութեամբ և ճարտարութեամբ դիմադրեց. թէ՝ յաղթութիւնը կատարեալ եղած է, 40 գերիներ առած ենք, բաւական թուով պօէրներու դիակները թաղելու զբաղած ենք բայց մեռեալներու և վիրաւորեալներու շատերը իրենց ընկերներուն կողմէ տարուած են. շատ մը ձիեր և կովեր ինկած են ձեռքերնիս։

—Պաշտօնապէս կ՚իմացուի թէ Զօրավար Ֆրէնչ դէպ ի Առընտիլ յառաջխաղացութիւն մը ըրած է, բայց շատ ամրացած գտած և երեք վիրաւորեալով ետ քաշուած է։

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԿԱՅՍՐԸ

Հեռագիրները կը ծանուցանեն Վիլհելմ Բ. կայսեր և կայսրուհւոյն Անգլիա ժամանումը։

Կանուխէն պատրաստուած ծրագրի մը համաձայն Վինձսորի պալատին մէջ շքեղ հացկերոյթ մը տեղի ունեցած է ի պատիւ վեհապետներուն։

Ռիւթեր կը ծանուցանէ թէ այս հացկերոյթը արտակարգ և եզական ճոխութիւն մը ունեցած է։ Վ.Ե.Հ. Թագուհիէն, Թագաւորական ցեղէ իշխաններէն և իշխանուհիներէն զատ, հացկերոյթին ներկայ եղած են Դիւանագէտները, ամէն նախարարները, ինչպէս նաև Լորտ Ռոզպէրի, Քէմպրիջէյ, Ռոպէրթս և Վոլսլէյ։

Վիլհէլմ կայսր հաստատապէս ուզելով իւր այցելութեանը անպաշտօն կերպարան մը տալ, Պալատի սովորական ընդունելութիւններէն զատ, որևէ պաշտօնական արարողութիւններու ներկայ չգիտի ըլլայ։

ԱԶԳԱՅԻՆ

Երեսփոխանական ժողովոյ պակասեալ չորս անդամոց ընտրութիւնը, որ Ազգային Առաջնորդարանի ղրկած հրաւիրագրերուն համաձայն վաղը 14/26 նոյեմբեր տեղի պիտի ունենար, կը լսենք թէ Ս. Աստուածածին եկեղեցւոյ դուռը կախուած ազդարարութիւն մը կը ծանուցանէ ընտրութեանց յետաձգումը մինչև 10 Դեկտեմբեր 99։

Ընտրողական ժողովոյ պէպ ի ժողովրդականութիւն առած այս քայլը, երկրորդ ապացոյց մ'է թէ հետզհետէ ազգային ժողովոց անդամը, որ խրոխտ եսասիրութիւն մը ցոյց տալ կուզէին հայ ժողովրդեան, զգացած ենթէ առանց անոնց, իրենց դոյութեան այլ ևս բանաւոր պատճառ մը չ'մնար։

Այս քանի մը բառերը ժողովականաց ուղղելէ վերջ, հարկ անհրաժեշտ կը համարինք կոչում ընել հայ ժողովրդեան, որպէսզի իրենց ազգային տուրքը — որչափ ալ բանաւոր և իրաւացի չըլլայ եղած առաջարկը, քանի որ ժողովականք կը պընդեն թէ վճարողները միայն իրաւունք պիտի ունենան — ընդ փոյթ վճարելով քուէարկելու իրաւունքը ձեռք բերեն և միևնոյն ատեն ողջմտութեամբ և անկողմնակալօրէն բանիմաց և ժողովրդասէր անհատներ ընտրեն Երեսփոխանութեան մէջ, որպէսզի ի հարկին ժողովուրդի ձայնը պէտք եղած տեղը նոյնութեամբ և անփոփոխ հասցնելու խղճմտանքով օժտուած ժողովականներ ալ գտնուին։

Թէպէտ և Ազգ. Առաջնորդարանի աթոռներն իրենց վրայ բազմող ժողովականաց երակներուն մէջ ազնուապետականի հովեր առնելու թոյնը կը ներարկեն, սակայն յուսահատելու չէ։ Ժողովուրդը պէտք է միշտ պահանջկոտ ըլլայ օրինաւոր սահմանի մէջ և օր մը վերջապէս մեր աղաները իրենց փափաքները ուսումնասիրելու ստիպուած պիտի տեսնէ։

«Արշալոյս»ի հրատարակութիւնը նոր սկսուած ատեններն, աղքատախնամի, որբախնամի, լարանի և ուրիշ շատ մը ընկերութեանց գումարումները և ծանուցումները մէկմէկու կը յաջորդէին, այնպէս որ տեղ և ժամանակ չէինք ունենար զանոնք դասաւորելու և ատենը ատենին հասցնելու։

Երկու ամիսէ աւելի է որ կ'երևի թէ այդ ընկերութեանց վարիչները յոգնած, պարտասած երկար հանգիստ մը վայելել կուզեն և շշուկ մը անգամ չ'դար մերթ ալ հանգիստը խռովելու։

Ադքատախնամ ընկերութեան տեղեկագիրը խոստացուած էր մեզի ղրկուելու, որ մինչև ցարդ չ'ստացանք։

Լարան ընկերութեան վիճակին վրայ տեղեկութիւն մը չ'տրուեցաւ մեզ, որոյ զարգացման և յառաջդիմութեանը վրայ մեր խնդակցութիւնը կարենայինք յայտնել։

Որբասիրա՞ցը։ Մեր որբերը աչքերնին դարձուցած մեզ կը նային և բաղկատարած օգնութիւն կը հայցեն. իսկ մե՞նք...։

Կը լսենք թէ ամիսէ մը աւելի է որ Որբասիրաց ընկերութեան առաջամեայ Դորձադիր ժողովը իւր տեղեկագիրը մատուցած է առ որ անկ է։ Հարկ էր որ մինչև այսօր Ընդհ. ժողովոյ գումարումը տեղի ունենար։ Արդեօք ի՞նչ ջուրի վրայ է մեր ծանրաշարժ Ընդհանուր Դիւանը։

Մենք դեռ շատ զարգացումի պէտք ունինք աղատութեան ցանկալու համար։ Որչափ մեր մէջ կիրքերը չեն լռեր և համերաշխութիւնը չ'տիրեր, այնչափ մեզմէ խոյս պիտի տայ յառաջդիմութիւնն ու աղատութիւնը։

ԱՋՊ-

«Փարոս» լրագրի տարեկան հաւաքածոն ունենալով ծախելու տրամադիր եղողներէն կը խնդրուի որ հաճին խմբագրութեանս իմացնել։

ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Երբ 96 թուականին Թուրքիոյ գրեթէ բոլոր նաւահանգիստներէն բազմաթիւ հայեր խուռնեռամ դէպ ի արտասահման կուզէին իրենց գնացքը ապահով ապաստանարան մը գտնելու յուսով, Պէնլեան ալ իր տասն հոգիէ բաղկացած խումբովը գաղթականութեան հոսանքին հետ շտապեց ապաստանիլ Դահիրէ. ուր արդէն տարիներ առաջ, Թէվֆիք փաշայի օրով ճոխ խումբով մը եկած եւ իր դերասանական տաղանդը ցոյց տուած էր։

Պէնլեան որ երբեմն լաւ կազմակերպուած գուսաներգական խումբովը մեծ յաջողութիւն գտած էր Եգիպտոսի ոստաններուն մէջ, այս անգամ ալ իրաւունք կունենար յուսալու թէ պիտի կարենար միևնոյն յաջողութիւնը ձեռք բերել։

Եւ արտասովոր խանդավառութեամբ մը «Ջաղացպանի Աղջիկ»ովը վարագոյրը բացաւ։ Ի՜նչ մեծ պատրանք եւ յուսախաբութիւն սակայն։ Այդ օրը Գահիրէի ժողովուրդը իր պատկառելի բացակայութեամբը կը պատուէր փառքեռի աթոռները։ Եւ Պէնլեան, այդ բազմամեայ մշակը, ի զուր խղճի մտօք իւր դերը կը կատարէր. կարծես այդօրուընէ իւր ծրագրած լայն գործունէութեան առջեւ առժամեայ վերջակէտ մը դնելու պարտաւորեալ զգալով ինքզինք։

Այսպէս շարք մը ներկայացումներ միշտ դիպասով անցնելէ յետոյ, Պէնլեան շատ լաւ ըմբռնեց թէ անյաջողութեան մառախուղը պատած է իր ապերախտ ասպարէզին վրայ եւ պահ մը հաստատեց թէ Գահիրէի հայ ժողովուրդը դատապարտելի կոչուելու աստիճան անտարբեր ու ըսկեպտիկ եղած էր հանդէպ թատրոնին։ Ի զուր աշխատեցաւ որպէսզի գտնէ դպրոց, մամուլ եւ երիտասարդութիւն, որոց միացնելով թատրոնն ալ, օտարութեան մէջ զարգացման խորանը կանգնել կարողանայ։

Պէնլեանի Ցուսախաբութիւնը դրական դարձաւ, երբ տեսաւ թէ Ֆելլահներու երկրին սեփական պելեռվը իր ղրկած սոմսակները ետ կը դառնային, գռեհիկ պատրուակներով, որոնք մարդուս նողկանք եւ արդահատանք ազդելէ զատ, ուրիշ ո՛եւէ հանգամանք չեն ունենար։ Ուստի խանձարուրին մէջ մարեցաւ վերջապէս ա՛յն ծրագիրը, որ այնչափ խնամով պատրաստած էր նա։ Դժնդակ պարագան ներկայացած էր, նա չուզեց երբէք այս անյաջողութիւնը ճակատագրական փոփոխումներու վերագրել. եւ տեսարանի այդ ուրուականը անգամ մը ևս ցոյց տալու համարիւր ճկունութիւնը եւ կորովամտութիւնը, գուսաներգական խումբ մը կազմելու փոխեց իր նպատակը եւ որուն անդրանիկ խաղը Լեպլեպիճի Հոր Հոր ազա Խոտվական Օպերա թատրոնին մէջ ներկայացուեցաւ։

Տիկին Նուարդ, Պէնլեաններ, Դրեանց եւ այլք, իրենց յաջողակութեան չնորհիւ նոր հոգի եւ մարմին տուին Լեպլեպիճիին, անմահացնելու չափ կենդանութիւն ներշնչելով Զուհաճեանի սոյն չքնաղ Օպերէթին։

Սակայն Գահիրէցին, ցաւալի է ըսել, գրեթէ միեւնոյն անտարբերութեամբ վերաբերուեցաւ միշտ, տկարին առջեւ խրոխտ եւ անկարեկիր մնալով։ Նախամեծար համարեց Էլsorաsoն ու Ալfազարը, որովայնապարերու մէջ իւր հաճոյից յագուրդը փնտռելով։

Անցեալ օրեր Վարիյէթէ թատրոնին մէջ ներկայացուած Աբչակ Բ. ողբերգութիւնը, առիթ տուած էր «Արգոս»ի, քիչ մը թատերական խորագրին տակ Աբշալոյսի մէջ անողոք եւ չարաչար կերպով քննադատել հայ խումբը։

«Արգոս» այդ ներկայացման անյաջողութիւնը կը վերագրէ խումբին հայ ըլլալուն, ինչ որ սխալ ըմբռնում եւ միակողմանի դատողութիւն մ'է, որովհետեւ հայն ալ ժամանակին ունեցած է իր թատրոնը, իր խումբը որ գնահատուած է նոյն իսկ եւրոպացիներէ։

«Արգոս» ինչ ի՞նչ քննադատութիւններ ընելէ յետոյ, կը մեղադրէ Պէնլեանները յարմարաւոր խումբ մը կազմելու մէջ ետ մնալնուն համար։ Կերևի թէ յօդուածագիրը մոռցած է 97ին 36 հոգիէ բաղկացեալ գուսաներգական խումբին Օպերա թատրոնին մէջ տուած շարք մը ներկայացումները, որոնք կատարեալ յաջողութիւններ եղան միշտ։ Միթէ կրնա՞նք ըսել թէ այդ տարուան խումբը հասարակութիւնը չ'կարողացաւ գոհացնել. Բայց ո՛ւր դնենք հայ ժողովրդի անտարբերութիւնը որ միշտ մերժեց հայ խումբին տոմսակները եւ գնաց իր լուման օտարներու գրպանը դնելու. միթէ այն ատե՞ն ալ Պէնլեանի խումբը անվարժ դերակատարներէ կազմուած էր։

Այսպէս Պէնլեան միշտ գործունեայ իր ասպարէզին մէջ, առանց կարեւորութիւն տալու այն ամէն անհարթելի խոչնդոտներուն, անայլայլ յարատեւութեամբ մը ոգի ի բռին աշխատելով վերջապէս անցեալ ուրբաթ Աղէքսանդրիայէն մեկնեցաւ դէպ ի Փարիզ, որպէս զի յառաջիկայ 1900 ի ցուցահանդէսի Արեւելեան բաժնին մէջ, հայ արուեստը եւ երաժշտութիւնը օտարներուն ծանոթացնելու համար, Ֆրանսայի թատրոններու գործակատարներուն հետ պէտք եղած նախնական բանակցութիւնները կատարէ։

Իւր խումբին répertoire ը պիտի կազմեն Լեպլեպիճի, Արիֆ, Քեօսէֆեհիա, Փեմպեզրզ, Զեյպեք եւ այլ Օպերէթներ։

Արդարեւ չենք կարող մեր հիացումը զսպել երբ կը տեսնենք Պէնլեանի Հոր Հոր Աղայի դերին մէջ ցոյց տուած տաղանդը եւ ճարտարութիւնը եւ իրաւունք կունենանք խորհելու թէ, օր մը երբ այդ հսկայ նոճին տապալի, պէտք է Հոր Հոր Աղայի դերն ալ իրեն հետ միասին թաղել, որպէս զի իր յաւիտենական քունը խռովողներ չ'գտնուին։

Ք.

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԲԱԹ 24 ՆՈՅԵՄԲԵՐ 1899

Ա.	Թիւ 4544	չահած է Ֆրանք	1000
Բ.	„ 7118	„	200
Գ.	„ 6036	„	100
Դ.	„ 320	„	50
Ե.	„ 7772	„	50

Հեռաւոր 25 ական Ֆրանք կը շահին

1145	1184	2391	998	6912	5745
5507	6750	8244	9297	5876	6073
8651	2016	7476	1496	8637	2390
	7644	576	8585	4439	

ԾԱՆՕԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևները ութը օրէն չեն գանձուիր, Ընկերութեան մնոուկին սեփականութիւնը կը լինին։

ԵՐԵԿՈՅԵԱՆ ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ

ՂԱՓԱՀԱՍՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Ի ՏԱՎՈՒՏԻՑԷ

Դասաւանդութիւնք սկսած են Նոյեմբ. ամսոյ 6 էն սկսեալ՝ երեկոյները ժամը 7 էն մինչև 9 1/2 և կ'աւանդուին Անղ. Գաղղ. Արաբերէն և Հայերէն դասեր։

ՎԿԱՅԵԱԼ ԱՂԲԱՏՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԻ ԶՐԻ ԵՆ

Դիմել առ Մ. Ե. ԳՆԱՃԵԱՆ Հիմնադիր-Տնօրէն Հայ Աւետարանական վարժարանաց։

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՌ

Ծուզցի Պաք վաճառատան մօտերը, Կամէ-էլ-Պէնարի ճիշտ դիմացը

ԵԿԱՒՕՖ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս իրենց նոր բացած փուռին մէջ, անխարդախ աւելուրէ կը պատրաստուի ԳԱՂՂԻԱԿԱՆ, ԱՆԳԼԻԱԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր։ Սուրճի, թէյի եւ կաթի պաքսիմաթներ, եւայլն։

Եկաւօֆ եւ Ընկերութիւն մեծ ջանք եւ հոգածութիւն պիտի ունենան իրենց դիմող բոլոր յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու։

Ցանձնարարութիւնք ամենայն ճշդութեամբ եւ փութով կը կատարուին։ 18—50

ԱՒԵՏԻՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Կ. ՊՕԼՍՈՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՇՈՒՊՐԱ — ԿԱՄՈՒՐՋԻՆ ԴԻՄԱՑ — ՇՈՒՊՐԱ

Զամաշիր Սօգաղը

Ֆրանսական և ռուսական ընտիր ապրանքներուն ամենէն տոկունները կը գործածէ միշտ։

Արուեստին մէջ ունեցած հմտութիւնը ամեն տարակոյսէ վեր է։

Իրեն պատրաստած ճաշակաւոր ու ձեւաւոր կօշիկները բոլոր յաճախորդաց գոհունակութեան են արժանացած։

Ձեւաւոր և տոկուն կօշիկներ ունենալու փափաքողը՝ երբ առաջին անգամ հոն դիմէ, շատ գոհ պիտի մնայ և անպատճառ մնայուն յաճախորդ պիտի արձանագրէ ինքզինք։ 1—50

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՒՇԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐՈՒ

ՖՕՆՕԳՐԱՖ

ԳԱՀԻՐԷ, — Մուսմի փողոց, — ԳԱՀԻՐԷ

Ս. եւ Ս. Սեսճավիի վաճառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնսոլի ընտիր տեսակէ բանտիւներու մեծ մթերք։

ԴԻՄԵՑԷ'Ք ՀՈՆ եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, ադամանդազարդ, ոսկի, արծաթ եւ նիքել։

Ֆրանսական եւ ամերիկեան ապրանաց ամենաընտիր տեսակներէն զարդեղէններ, շղթաներ, օղեր, մատանիներ եւայլն։

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ։

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՁԱՓԱՒՈՐ

34—50

ՏՕԿԹՈՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԷՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ապտին, Շարէ Քուպրի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակռաներ։

Կը դադրեցնէ վայրկենապէս ակռայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերովը։

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն։

Իր լեցուցած ակռաներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ։ 4 3—10

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱԲԱՐՁ

Վկայեալ տեղական կառավարութենէն եւ բժշկական վարժարանէն

Իւր բնակութիւնը հաստատած է ի Շարա Ապա-իւլ-Ազիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց։

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը եւ տեղական կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակցութիւնը կարեւոր առաւելութիւններ են։

Իրեն դիմողները կատարելապէս գոհ պիտի մնան։ 21—24

ԱՍՏԻԿ ԷՍՄԷՐԵԱՆ

Կ. ՊՕԼՍՈՅ

ՀԱՅ ՔԻՒՐՔՃԻ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐԷՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳԸ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄՄԷՏ ԱԼԻ

ՊԱՊԷԷ-ԽԱԼԷՔ

Ամեն տեսակ հին և նոր մուշտակները եւրոպական և թուրքական ճաշակով ձեւի կը բերէ և նորի կը վերածէ։

Իրեն դիմող յարգելի յաճախորդները պատրաստ պիտի գտնեն նաև մուշտակ օձիքներ ևլն։

Անոնք որ իրենց հինցած մուշտակները տանը մէկ անկիւնը նետելով ցեցերու կեր կ'ընեն, կրնան այս առիթէն օգտուիլ։ 4—8

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (բասմաղ) սեւ, շագանակագոյն և ոսկեգոյն։

Սեւ ներկ շիշով վայրկենապէս սեւցնող։ Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է։

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերաթափութիւնը կը դադրեցնէ եւ մազերը կը ճոխացնէ։ Նմանապէս ճաղատ (տազ) գլուխները մազ կը բերէ. 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած և հիանալի արդիւնք տեսնուած է։ Շիշը 10 ղրշ. ողջ (2 1/2 ֆրանք)։

Վերոյիշեալ ջուրէն կը գտնուի նաև Աղէքսանդրիա Սիքքէ-Կէտիա մանրավաճառ Պ. Լեւոն Ասլանեանի մօտ։

Ակռայի փոշի և ջուր. մին մաքուր և ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող և ամրացնող։

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ և օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են։

Կը գնեն՝ք, կը վաճառենք և կը փոխանակենք բոլոր ազգաց գործածած նամակադրոշմները։ 3 6—8

ՏՊԱՐԱՆ-ԿԱՁՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ի ԳԱՀԻՐԷ

ՇԱՐԱ ՄՕՇԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահագրեր, Հրաւիրագրեր, Այցեքարտեր, Ցանկեր, Գիրքեր, տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Ընկերութեանց եւ վաճառականներու տպագրական ամեն պիտոյքներ։

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան, ճշդապահութեան և գներու չափաւորութեան մէջ։

Եգիպտոսի ո և է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին։

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ — Le Gérant Dr A. S. HAGOPIAN